## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Դատական դեպարտամենտի կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/07» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«05» հոկտեմբերի 2023թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նիստը նախագահող՝*

**Նորայր Աղամալյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**)

*հանձնաժողովի անդամներ՝*

**Արմեն Ավետիսյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ-շինարար (գնման պատասխանատու/ գնահատման աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**)

**Տիգրան Զեյնալյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**)

**Անդրանիկ Աբգարյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ բացման աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**)

**Վարդան Կարապետյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ – շինարար (գնման պատասխանատու/ բացման աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**)

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Արուս Խաչատրյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ (գնման պատասխանատու/ ընթացակարգի համակարգող՝ **ԳՊ/ՄԻՄ**)

Նիստից բացակայում էր՝

**Արթուր Ասատրյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ **ԳՊ/ԳԱՊ**)

*Համաձայն ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 26-րդ կետի 1-ին ենթակետի՝ նիստը նախագահում է Նորայր Աղամալյանը:*

**1. Տեղեկություն՝ «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/07» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.**

Հայտերը բացվել են www.armeps.am կայքի՝ էլեկտրոնային գնումների իրականացումն ապահովող համակարգի /այսուհետ՝ Համակարգ/ միջոցով՝ 2023թ.-ի հոկտեմբերի 05-ին՝ ժամը 10:00-ին:

**2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք աշխատանքների գնման գնի վերաբերյալ.**

Գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի հիման վրա:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նիստը նախագահողը հրապարակեց, որ գնման հայտով սահմանված է շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման համար պլանավորված (կանխատեսվող) գնման ընդհանուր գինը.

| Չափաբաժնի համարը | Չափաբաժնի անվանումը | Գնման հայտով սահմանված՝ աշխատանքների ձեռքբերման համար պլանավորված (կանխատեսվող) գնման ընդհանուր գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | Շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ /Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Վայքի նստավայրի՝ ք. Վայք, Ջերմուկի խճուղի 8 հասցեում տեղակայված վարչական շենքի ընթացիկ նորոգման աշխատանքներ/ | 13 335 680 |

**3. Հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝**

| **Մասնակցի անվանումը (անունը)** | **Մասնակցի գործունեության հասցեն** |
|---|---|
| «ԳԱՊ ՇԻՆ» ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Ֆրունզեի փ. 6/5, բն.36 |
| Ա/Ձ Վանուշ Մարգարյան | Արագածոտնի մարզ գ.Գեղաձոր |
| ՊՐԵՄԻՈՒՄ ԳՐՈՒՊ ՍՊԸ | Ք.Գավառ |

Ներկայացված հայտերը Համակարգի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

**4. Տեղեկատվություն՝ Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.**

Հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

**5. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.**

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

**6. Մասնակիցների կողմից ներկայացված հայտերի ուսումնասիրության նպատակով հանձնաժողովը որոշեց նիստը հետաձգել և հաջորդ նիստը հրավիրել 2023թ. հոկտեմբերի 06-ին՝ ժամը 10:00-ին, Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնի վարչական շենքում (հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1):**

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի
Նիստը նախագահող՝ Նորայր Աղամալյան

Անդամներ՝

Արմեն Ավետիսյան

Տիգրան Զեյնալյան

Անդրանիկ Աբգարյան

Վարդան Կարապետյան

Քարտուղար՝ Արուս Խաչատրյան

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

Դատական դեպարտամենտի կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/07» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«06» հոկտեմբերի 2023թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նիստը նախագահող՝*

**Նորայր Աղամալյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**)

*հանձնաժողովի անդամներ՝*

**Արմեն Ավետիսյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ-շինարար (գնման պատասխանատու/ գնահատման աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**)

**Տիգրան Զեյնալյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**)

**Անդրանիկ Աբգարյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ բացման աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**)

**Վարդան Կարապետյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ – շինարար (գնման պատասխանատու/ բացման աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**)

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Արուս Խաչատրյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ (գնման պատասխանատու/ ընթացակարգի համակարգող՝ **ԳՊ/Մհմ**)

Նիստից բացակայում էր՝

**Արթուր Ասատրյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ **ԳՊ/ԳԱՊ**)

*Համաձայն << կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 26-րդ կետի 1-ին ենթակետի՝ նիստը նախագահում է Նորայր Աղամալյանը:*

**1. Տեղեկատվություն՝ հանձնաժողովի նիստը կասեցնելու վերաբերյալ.**

«ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/07» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 8.18-րդ կետի համաձայն՝ տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում մասնակիցը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի հավաստագիրը պետք է զետեղված լինի «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում:

Այս կապակցությամբ՝ ՊՐԵՄԻՈՒՄ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթուղթը՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված N 1) ուսումնասիրելիս, անհրաժեշտություն է առաջացել վերոնշյալ փաստաթղթի էլեկտրոնային թվային ստորագրության վավերականության վերաբերյալ ստանալ տվյալ ոլորտը կարգավորող մարմնի՝ «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ /ԷԿԵՆԳ/» ՓԲԸ-ի դիրքորոշումը:

Վերոգրյալով պայմանավորված՝ հանձնաժողովը որոշեց.

- նիստը կասեցնել և ՊՐԵՄԻՈՒՄ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնանշման հարցմանը մասնակցելու դիմում հայտարարության (Հավելված N 1) էլեկտրոնային թվային ստորագրության վավերականության վերաբերյալ դիրքորոշում ստանալու նպատակով դիմել «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ /ԷԿԵՆԳ/» ՓԲԸ-ին,
- հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ից համապատասխան գրության ստացմանը հաջորդող աշխատանքային օրը՝ ժամը 10:00-ին, Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնի վարչական շենքում (հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1):

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի
Նիստը նախագահող՝ Նորայր Աղամալյան

Անդամներ՝

Արմեն Ավետիսյան

Տիգրան Զեյնալյան

Անդրանիկ Աբգարյան

Վարդան Կարապետյան

Քարտուղար՝ Արուս Խաչատրյան

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

Դատական դեպարտամենտի կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/07» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«11» հոկտեմբերի 2023թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Արթուր Ասատրյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ **ԳՊ/ԳԱՊ**)

*հանձնաժողովի անդամներ՝*

**Նորայր Աղամալյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**)

**Արմեն Ավետիսյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ-շինարար (գնման պատասխանատու/ գնահատման աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**)

**Տիգրան Զեյնալյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**)

**Անդրանիկ Աբգարյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ բացման աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**)

**Վարդան Կարապետյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ – շինարար (գնման պատասխանատու/ բացման աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**)

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Արուս Խաչատրյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ (գնման պատասխանատու/ ընթացակարգի համակարգող՝ **ԳՊ/ՄԻՄ**)

**1.** Գնահատող հանձնաժողովի 06.10.2023թ. նիստի N 3 արձանագրության 1-ին կետում նշված հարցի վերաբերյալ դիրքորոշում ստանալու նպատակով «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ /ԷԿԵՆԳ/» ՓԲԸ-ին ուղղված 06.10.2023թ. N ԴԴ-3-Ե-7154 գրությանը (կցվում է) ի պատասխան «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ից 2023 թվականի հոկտեմբերի 10-ին ստացվել է հ.3594 գրությունը (կցվում է):

**2. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր հայտում «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/07» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

2.1. «ԳԱՊ ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

2.2. Վանուշ Մարգարյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

2.3. ՊՐԵՄԻՈՒՄ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող գնանշման հարցմանն մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված N 1), գնային առաջարկը (Հավելված 2): Հայտում բացակայում է հրավերով պահանջվող՝ ՊՐԵՄԻՈՒՄ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվը՝ հավելված 2.1:

ՊՐԵՄԻՈՒՄ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա գնանշման հարցմանն մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված N 1) հաստատված չէ ընկերության տնօրենի էլեկտրոնային թվային ստորագրությամբ, փաստաթղթի վրա տեսանելի է այլ անձի էլեկտրոնային թվային ստորագրություն, սակայն հայտով ներկայացված չէ վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին (փաստաթուղթը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատելու մասին) փաստաթուղթ (լիազորագիր):

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 6, դեմ՝ 0:*

**3. Տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի (հայտում առկա փաստաթղթերի)՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.**

**3.1. «ԳԱՊ ՇԻՆ» ՍՊԸ**

- ներկայացված հայտում առկա գնանշման հարցման մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված N 1) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝ դիմում հայտարարության 2)-րդ կետում բացակայում է հրավերով նախատեսված «տոկոս» բառը,
- ներկայացված հայտում առկա ծավալաթերթը (ծավալաթերթ-նախահաշիվը) (Հավելված 2.1) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝ ծավալաթերթի (ծավալաթերթ-նախահաշվի) «Միավորի արժեք» և «Ընդհանուր արժեք» սյունակներում նշված են նաև «/ՀՀ դրամ/» բառերը, այն դեպքում, երբ մասնակցի կողմից ծավալաթերթը (ծավալաթերթ-նախահաշիվը) ներկայացվել է «հազար դրամ» հաշվարկային ձևով,
- ներկայացված հայտում առկա գնային առաջարկը (Հավելված 2) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

**3.2. Ա/Ձ Վանուշ Մարգարյան**

- ներկայացված հայտում առկա գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝ դիմում-հայտարարության երրորդ նախադասությունում գործունեության հասցեն լրացված է ոչ ամբողջական,
- ներկայացված հայտում առկա ծավալաթերթը (ծավալաթերթ-նախահաշիվը) (Հավելված 2.1) (այսուհետ՝ Ծավալաթերթ) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝
  - Ծավալաթերթի «Միավորի արժեք» և «Ընդհանուր արժեք» սյունակներում նշված են նաև «/ՀՀ դրամ/» բառերը, այն դեպքում, երբ մասնակցի կողմից Ծավալաթերթը ներկայացվել է «հազար դրամ» հաշվարկային ձևով, միաժամանակ Ծավալաթերթի վերջին երկու՝ «Ընդամենը» և «Ընդամենը» տողերում առկա են թվաբանական անճշտություններ՝ Ծավալաթերթի հաշվարկման արդյունքում ստացվող թվերը չեն համապատասխանում Ծավալաթերթի նույն տողերում նշված թվերին, հետևաբար նաև Գնային առաջարկի (Հավելված 2) «Արժեք» և «Ընդհանուր գինը» սյունակներում տառերով և թվերով նշված գումարներին,
  - Ծավալաթերթի «I. Շինարարական աշխատանքներ» բաժնի համար հաշվարկվող կշիռի շեղումը և «II. Ջրամատակարարում» բաժնի համար հաշվարկվող կշիռի շեղումը չեն համապատասխանում հրավերի ՄԱՍ I-ի 4.3-րդ կետի 4)-րդ ենթակետով և ՄԱՍ II-ի 2.6-րդ կետով սահմանված պայմաններին,
- ներկայացված հայտում առկա գնային առաջարկը (Հավելված 2) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

### 3.3. ՊՐԵՄԻՈՒՄ ԳՐՈՒՊ ՍՊԸ

- ներկայացված հայտում առկա գնանշման հարցմանն մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված N 1) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝

- դիմում հայտարարության երրորդ նախադասությունում գործունեության հասցեն լրացված է ոչ ամբողջական,
- դիմում հայտարարության մեջ նշված՝ իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը սխալ է՝ նշված հղմամբ հնարավոր չէ տեսնել հրապարակված հայտարարագիրը,
- «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ից ստացված 10.10.2023թ. հ. 3594 գրության համաձայն՝ ՊՐԵՄԻՈՒՄ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի դիմում հայտարարությունը չի պարունակում պատշաճ էլեկտրոնային ստորագրություն,

- ներկայացված հայտում առկա գնային առաջարկը (Հավելված 2) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 6, դեմ՝ 0:*

### 4. Մասնակիցների առաջարկած գներն են.

*ՀՀ դրամ*

| Հ/Հ | Չափաբաժնի անվանումը | ՊՐԵՄԻՈՒՄ ԳՐՈՒՊ ՍՊԸ | | | Ա/Ձ Վանուշ Մարգարյան | | | «ԳԱՊ ՇԻՆ» ՍՊԸ | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գինը | Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գինը | Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1 | Շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ. /Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Վայքի նստավայրի՝ ք. Վայք, Ջերմուկի խճուղի 8 հասցեում տեղակայված վարչական շենքի ընթացիկ նորոգման աշխատանքներ/ | 13 043 530 | - | **13 043 530** | 9 216 000 | 0 | **9 216 000** | 8 333 535 | 1 666 707 | **10 000 242** |

### 5. Հանձնաժողովը որոշեց.

- նիստը կասեցնել և հաջորդ նիստը հրավիրել 2023թ. հոկտեմբերի 13-ին, ժամը 10:00-ին, Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնի վարչական շենքում (հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1):

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 6, դեմ՝ 0:*

**Հանձնաժողովի քարտուղարին.**

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի, ինչպես նաև «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/07» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 8.9-րդ կետի պահանջներով՝ **«ԳԱՊ ՇԻՆ» ՍՊԸ-ի, Վանուշ Մարգարյան Ա/Ձ-ի, ՊՐԵՄԻՈՒՄ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի** հայտերում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնել հիշյալ մասնակիցներին՝ առաջարկելով մինչև սույն թվականի **հոկտեմբերի 12-ը ներառյալ** շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 6, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի
Նախագահ՝ _____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝ _____ Նորայր Աղամալյան

_____ Արմեն Ավետիսյան

_____ Տիգրան Զեյնալյան

_____ Անդրանիկ Աբգարյան

_____ Վարդան Կարապետյան

Քարտուղար՝ _____ Արուս Խաչատրյան

# ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
# ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

*0009, ք. Երևան, Կորյունի 15/1, Հեռ: (00 37410) 511-773*, www.court.am

**№ ԴԴ-3-Ե-** 7154

**« 06 » հոկտեմբերի 2023թ.**

**«ԷԿԵՆԳ» ՓԲԸ-Ի ՏՆՕՐԵՆ ԼԵՈՆԻԴ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ**

*Հարգելի՛ պարոն Ավետիսյան,*

ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 11-րդ ենթակետով սահմանված է, որ տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում: Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Այս կապակցությամբ՝ կից ներկայացնում եմ Դատական դեպարտամենտի կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/07» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում ՊՐԵՄԻՈՒՄ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթուղթը՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված N 1), և խնդրում հնարավորինս սեղմ ժամկետում տալ կարծիք՝ նշված փաստաթղթում դրված էլեկտրոնային թվային ստորագրության հիշյալ նորմով սահմանված պահանջներին համապատասխանության վերաբերյալ:

Առդիր՝ 1 ֆայլ:

**ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ**
**ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ**

**ԱՐՇԱԿ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ**

*Կատ.՝ Նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչություն, Գնումների համակարգման բաժին*
*Հեռ.՝ /+37410/ 511-787, 511-788*

**«ԷԿԵՆԳ» ՓԲԸ**
ՀՀ, ք. Երևան, 0010,
Տիգրան Մեծի 4, 5-րդ հարկ
Հեռ՝ 060 460405
info@ekeng.am
www.ekeng.am

h.3594
10.10.2023թ.

**Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմի**
**Դատական դեպարտամենտի**
**Ղեկավարի ֆինանսատնտեսական հարցերով տեղակալ**
**Արշակ Վարդապետյանին**

Հարգելի պարոն Վարդապետյան

Ի պատասխան Ձեր՝ 2023 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ ԴԴ-3-Ե-7154 հարցման՝ տեղեկացնում ենք, որ Ձեր կողմից ներկայացված Պրեմիում Գրուպ ՍՊԸ-ի դիմում հայտարարությունը չի պարունակում պատշաճ էլեկտրոնային ստորագրություն:

Հարգանքով՝
«ԷԿԵՆԳ» ՓԲԸ տնօրեն
Լ. Ավետիսյան

Recoverable Signature

X

Signed by: AVETISYAN LEONID 1610790049

մ 1500Հ
10/10/23թ

*Ծրագրերի կառավարման բաժին*
*+374 60 464 501 (204)*

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

Դատական դեպարտամենտի կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/07» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«13» հոկտեմբերի 2023թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Արթուր Ասատրյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ **ԳՊ/ԳԱՊ**)

*հանձնաժողովի անդամներ՝*

**Նորայր Աղամալյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**)

**Արմեն Ավետիսյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ-շինարար (գնման պատասխանատու/ գնահատման աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**)

**Տիգրան Զեյնալյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**)

**Անդրանիկ Աբգարյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ բացման աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**)

**Վարդան Կարապետյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ – շինարար (գնման պատասխանատու/ բացման աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**)

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Արուս Խաչատրյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ (գնման պատասխանատու/ ընթացակարգի համակարգող՝ **ԳՊ/ՄԻՄ**)

**1. Տեղեկատվություն՝ «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/07» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում «ԳԱՊ ՇԻՆ» ՍՊԸ-ի, ՊՐԵՄԻՈՒՄ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի, Վանուշ Մարգարյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտերում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների շտկման և հայտերի գնահատման վերաբերյալ.**

1.1. «ԳԱՊ ՇԻՆ» ՍՊԸ-ն հրավերով սահմանված կարգով և ժամկետում շտկել է հայտում արձանագրված անհամապատասխանությունները:

1.2. ՊՐԵՄԻՈՒՄ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ն հրավերով սահմանված կարգով և ժամկետում չի շտկել հայտում արձանագրված անհամապատասխանությունները:

1.3. Հայտում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների շտկման նպատակով հրավերով սահմանված կարգով և ժամկետում Վանուշ Մարգարյան Ա/Ձ-ի կողմից ներկայացրած փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, իսկ ծավալաթերթը (ծավալաթերթ-նախահաշիվը) (Հավելված 2.1) (այսուհետ՝ Ծավալաթերթ) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝

- Ծավալաթերթի «Միավորի արժեք» և «Ընդհանուր արժեք» սյունակներում նշված են նաև «/ՀՀ դրամ/» բառերը, այն դեպքում, երբ մասնակցի կողմից Ծավալաթերթը ներկայացվել է «հազար դրամ» հաշվարկային ձևով, միաժամանակ Ծավալաթերթի վերջին երկու՝ «Ընդամենը» և «Ընդամենը» տողերում առկա են թվաբանական անճշտություններ՝ Ծավալաթերթի հաշվարկման արդյունքում ստացվող թվերը չեն համապատասխանում Ծավալաթերթի նույն տողերում նշված թվերին, հետևաբար նաև Գնային առաջարկի (Հավելված 2) «Արժեք» և «Ընդհանուր գինը» սյունակներում տառերով և թվերով նշված գումարներին,
- Ծավալաթերթի «II. Ջրամատակարարում» բաժնի համար հաշվարկվող կշիռի շեղումը չի համապատասխանում հրավերի ՄԱՍ I-ի 4.3-րդ կետի 4)-րդ ենթակետով և ՄԱՍ II-ի 2.6-րդ կետով սահմանված պայմաններին:

**Հանձնաժողովը որոշեց.**

- Վանուշ Մարգարյան Ա/Ձ-ի, ՊՐԵՄԻՈՒՄ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը գնահատել անբավարար և մերժել՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետով:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 6, դեմ՝ 0:*

**2. Տեղեկատվություն՝ գնահատող հանձնաժողովի նիստը կասեցնելու վերաբերյալ.**

«ԳԱՊ ՇԻՆ» ՍՊԸ-ն գնանշման հարցման մասնակցելու դիմում հայտարարությամբ (Հավելված N 1) հայտարարել և հավաստել է, որ «ԳԱՊ ՇԻՆ» ՍՊԸ-ն և իրեն փոխկապակցված անձինք բավարարում են «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/07» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

«ԳԱՊ ՇԻՆ» ՍՊԸ-ի հայտը ուսումնասիրելիս գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ www.procurement.am հասցեով գործող գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 06.12.2022թ.-ից մինչև 06.12.2024թ. ժամկետով ներառված «Կվալիտ Շին» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 02283514) մասով որպես մասնակցի գտնվելու կամ բնակության վայր նշված է «Ք. Երևան, Ֆրունզեի փ. 6/5» հասցեն և «ԳԱՊ ՇԻՆ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 02295169) հայտով ներկայացված գնանշման հարցման մասնակցելու դիմում հայտարարությունում (Հավելված N 1) որպես մասնակցի գործունեության հասցե նշված է «ՀՀ, ք. Երևան, Ֆրունզեի փ. 6/5, բն.36» հասցեն, միաժամանակ նշված երկու ընկերությունների մասով ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցած իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրերում որպես իրական շահառու նշված է միևնույն անուն ազգանունով անձը (Վիգեն Ուրուշանյան):

Միաժամանակ՝ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 121-րդ կետով սահմանված է, որ մասնակցի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:

Վերոգրյալով պայմանավորված՝ հանձնաժողովը որոշեց.

- նիստը կասեցնել, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 67-րդ կետի պահանջներով, մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման նպատակով, գրությամբ դիմել ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն՝ «ԳԱՊ ՇԻՆ» ՍՊԸ-ի և «Կվալիտ Շին» ՍՊԸ-ի հնարավոր փոխկապակցվածության հանգամանքը բացահայտելու համար:

- հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունից պատասխան գրության ստացմանը հաջորդող աշխատանքային օրը՝ ժամը 10:00-ին, Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնի վարչական շենքում (հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1):

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 6, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի
Նախագահ՝ _____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝ _____ Նորայր Աղամալյան

_____ Արմեն Ավետիսյան

_____ Տիգրան Զեյնալյան

_____ Անդրանիկ Աբգարյան

_____ Վարդան Կարապետյան

Քարտուղար՝ _____ Արուս Խաչատրյան

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

Դատական դեպարտամենտի կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/07» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«20» հոկտեմբերի 2023թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Արթուր Ասատրյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ **ԳՊ/ԳԱՊ**)

*հանձնաժողովի անդամներ՝*

**Նորայր Աղամալյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**)

**Արմեն Ավետիսյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ-շինարար (գնման պատասխանատու/ գնահատման աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**)

**Տիգրան Զեյնալյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**)

**Անդրանիկ Աբգարյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ բացման աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**)

**Վարդան Կարապետյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ – շինարար (գնման պատասխանատու/ բացման աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**)

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Արուս Խաչատրյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ (գնման պատասխանատու/ ընթացակարգի համակարգող՝ **ԳՊ/ՄԻՄ**)

**1. Տվյալներ՝ «ԳԱՊ ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժելու և «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/07» ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ.**

Գնահատող հանձնաժողովի 13 հոկտեմբերի 2023թ. նիստի N 5 արձանագրության 2-րդ կետի հիման վրա ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությանն ուղղված 13 հոկտեմբերի 2023թ. N ԴԴ-3-Ե-ԴԴ/2274-23 Ե-7342 գրությանը (կցվում է) ի պատասխան 2023 թվականի հոկտեմբերի 19-ին ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունից ստացվել է 17.10.2023թ. N-/25.9/44712-2023 գրությունը (կցվում է):

Հիմք ընդունելով ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունից ստացված վերոնշյալ գրությունը, ինչպես նաև ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 121-րդ կետը և ղեկավարվելով հիշյալ կարգի 67-րդ կետի պահանջներով՝ գնահատող հանձնաժողովը որոշեց **«ԳԱՊ ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել:**

**Հանձնաժողովը որոշեց.**

- «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/07» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն,
- հաստատել «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/07» ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը /կցվում է/:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 6, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի
Նախագահ՝ _____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝ _____ Նորայր Աղամալյան

_____ Արմեն Ավետիսյան

_____ Տիգրան Զեյնալյան

_____ Անդրանիկ Աբգարյան

_____ Վարդան Կարապետյան

Քարտուղար՝ _____ Արուս Խաչատրյան

**ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ**
**ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ**

*0009, ՀՀ, ք. Երևան, Կորյունի 15/1, 010 511 773, www.court.am*

**№ ԴԴ-3-Ե-** ԴԴ/9274-23 Ե-7342

**« 13 » հոկտեմբերի 2023թ.**

**ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ**
**ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ**
**ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԵՏ Տ. ՄԿՐՏՉՅԱՆԻՆ**

*Հարգելի՛ տիկին Մկրտչյան,*

Դատական դեպարտամենտի կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/07» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում հայտ է ներկայացրել «ԳԱՊ ՇԻՆ» ՍՊԸ-ն: «ԳԱՊ ՇԻՆ» ՍՊԸ-ն գնանշման հարցման մասնակցելու դիմում հայտարարությամբ (Հավելված N 1) հայտարարել և հավաստել է, որ «ԳԱՊ ՇԻՆ» ՍՊԸ-ն և իրեն փոխկապակցված անձինք բավարարում են «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/07» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում «ԳԱՊ ՇԻՆ» ՍՊԸ-ի հայտը ուսումնասիրելիս գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ www.procurement.am հասցեով գործող գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 06.12.2022թ.-ից մինչև 06.12.2024թ. ժամկետով ներառված «Կվալիտ Շին» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 02283514) մասով որպես մասնակցի գտնվելու կամ բնակության վայր նշված է «Ք. Երևան, Ֆրունզեի փ. 6/5» հասցեն և «ԳԱՊ ՇԻՆ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 02295169) հայտով ներկայացված գնանշման հարցման մասնակցելու դիմում հայտարարությունում (Հավելված N 1) որպես մասնակցի գործունեության հասցե նշված է «ՀՀ, ք. Երևան, Ֆրունզեի փ. 6/5, բն.36» հասցեն, միաժամանակ նշված երկու ընկերությունների մասով ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցած իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրերում որպես իրական շահառու նշված է միևնույն անուն ազգանունով անձը (Վիգեն Ուրուշանյան):

Միաժամանակ՝ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 121-րդ կետով սահմանված է, որ մասնակցի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է

վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման, իսկ գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորող ՀՀ օրենսդրության իմաստով փոխկապակցված անձանց շրջանակը սահմանված է Կարգի 119-րդ կետով:

Վերոգրյալով պայմանավորված և ղեկավարվելով Կարգի 67-րդ կետի պահանջներով՝ մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման նպատակով, խնդրում ենք նշված կետով սահմանված ժամկետում՝ հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում, հայտնել արդյո՞ք «ԳԱՊ ՇԻՆ» ՍՊԸ-ն և «Կվալիտ Շին» ՍՊԸ-ն Կարգի 119-րդ կետի իմաստով համարվում են փոխկապակցված անձինք, թե ոչ:

**ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ**
**ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ**

**ԱՐՇԱԿ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ**

*Կապ՝. «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/07» ծածկագրով*
*գնման ընթացակարգի համակարգող՝ Ա. Խաչատրյան*
*Հեռ.՝ /+37410/ 511-787, 511-788*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԵՏ

0051 ք. Երևան, Կոմիտաս 49/3. Հեռ. (374 10) 201461
Էլ. փոստ info@e-register.am

N-/25.9/44712-2023
«17» 10.2023 թ.

**ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ
ԱՐՇԱԿ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆԻՆ**

ՄՈՒՏՔ N N-15433
ԱՄՍԱԹԻՎ 19.10.23

Հարգելի պարոն Վարդապետյան,

Ի պատասխան 13.10.2023թ. ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությանն (այսուհետ՝ Գործակալություն) ուղղված № ԴԴ/2274-23 Ձեր գրության՝ հայտնում եմ, որ համաձայն իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանում (այսուհետ՝ Գրանցամատյան) առկա տեղեկությունների՝ «ԿՎԱԼԻՏ ՇԻՆ» ՍՊ ընկերության (ՀՎՀՀ՝ 02283514) և «ԳԱՊ ՇԻՆ» ՍՊ ընկերության (ՀՎՀՀ՝ 02295169) միակ մասնակից է հանդիսանում Վիգեն Հովհաննեսի Ուրուշանյանը (ՀԾՀ՝ 2108840540):

Համաձայն «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1. կետի 25-րդ կետի՝ « *25)* ***փոխկապակցված իրավաբանական անձինք՝*** *իրավաբանական անձինք,*

*ա. որոնցից մեկին ուղղակի կամ անուղղակի պատկանում է մյուսի կանոնադրական կապիտալում 20 և ավելի տոկոս մասնակցություն,*

*բ. որոնցից մեկի կանոնադրական կապիտալում մասնակցության 20 և ավելի տոկոսն ուղղակի կամ անուղղակի պատկանում է ֆիզիկական անձին, որին ուղղակի կամ անուղղակի կերպով պատկանում է նաև մյուս իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում 20 և ավելի տոկոս մասնակցություն,*

*գ. որոնք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից.»:*

Համաձայն Օրենքի 3-րդ հոդվածի 1. կետի 26) ենթակետի՝ *«26)* ***փոխկապակցված ֆիզիկական և իրավաբանական անձինք՝*** *ֆիզիկական և իրավաբանական անձինք, եթե՝*

*ա. ֆիզիկական անձին ուղղակի կամ անուղղակի պատկանում է 20 և ավելի տոկոս մասնակցություն իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում,*

*բ. ֆիզիկական անձն օրենքով չարգելված այլ ձևով հնարավորություն ունի կանխորոշելու իրավաբանական անձի որոշումները,*

*գ. ֆիզիկական և իրավաբանական անձինք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից.»:*

Համաձայն Օրենքի 3-րդ հոդվածի 1. կետի 27) ենթակետի՝ *«27)* ***փոխկապակցված ֆիզիկական անձինք՝*** *անձը և նրա ամուսինը, անչափահաս զավակը, անձի խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձը, անձի հետ մեկ տարվա ընթացքում 180 և ավելի օր համատեղ բնակվող յուրաքանչյուր չափահաս անձ, ինչպես նաև ֆիզիկական անձինք, որոնք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից.»:* Վերոգրյալից ելնելով՝ գտնում ենք, որ գրությունում նշված իրավաբանական անձանց մասով առկա է օրենքով նախատեսված փոխկապակցվածության հատկանիշ:

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝**

Recoverable Signature

X

ՏԱԹԵՎ ՄԿՐՏՉՅԱՆ

**ՏԱԹԵՎ ՄԿՐՏՉՅԱՆ**

Signed by: MKRTCHYAN TATEV 7001910902

Կատարող՝ Մարինե Մուխսյան
Գրանցման և հաշվառման բաժին
ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն
Հեռ. (010) 20-14-63

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին**

Ընթացակարգի ծածկագիրը՝ «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/07»

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/07» ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին տեղեկատվությունը՝

| **Չափաբաժնի համար** | **Գնման առարկայի համառոտ նկարագրություն** | **Գնման ընթացակարգի մասնակիցների անվանումները՝այդպիսիք լինելու դեպքում** | **Գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվել համաձայն՝"Գնումների մասին" ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի** /ընդգծել համապատասխան տողը/ | **Գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու հիմնավորման վերաբերյալ համառոտ տեղեկատվություն** |
|---|---|---|---|---|
| 1 | Շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ /Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Վայքի նստավայրի՝ ք. Վայք, Ջերմուկի խճուղի 8 հասցեում տեղակայված վարչական շենքի ընթացիկ նորոգման աշխատանքներ/ | «ԳԱՊ ՇԻՆ» ՍՊԸ<br>Ա/Ձ Վանուշ Մարգարյան<br>ՊՐԵՄԻՈՒՄ ԳՐՈՒՊ ՍՊԸ | <u>1-ին կետի</u><br>2-րդ կետի<br>3-րդ կետի<br>4-րդ կետի | Վանուշ Մարգարյան Ա/Ձ-ի, ՊՐԵՄԻՈՒՄ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը գնահատվել են անբավարար և մերժվել՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետով:<br>«ԳԱՊ ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատվել է անբավարար և մերժվել՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | կազմակերպման» կարգի 67-րդ կետի պահանջներով: |

“Գնումների մասին” ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/07» ծածկագրով գնումների համակարգող Արուս Խաչատրյանին:

Հեռախոս՝ 010511787:

Էլեկտրանային փոստ՝ ddgnumner@mail.ru:

Պատվիրատու՝ Դատական դեպարտամենտ: